

ԳԵՐԱՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՂՎԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Deutsche Hilfsbünde für Armenien

ԳԵՂԻԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵԶՉԵԱՆԻ

(Կարունակութիւնն գ)

ՊՐԵՍՍԻԱՆՆԵՐ ԵՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիլֆսբունդի վրայ եղած պաշտօնական և ոչ-պաշտօնական յարձակումների արձագանքները եղան պաշտօնական և մասնաւոր պարասխաններ:

Ա. Պաշտօնական ստացածինանները:
«Aus der Arbeit» թերթի 1899 թ. մայիսի համարում, Դր.
Լեպսիուսը ի դիմաց Հիլֆսբունդի՝ (Բերլին-կենտրոնի) հետեւալ
բազարութիւնն է գումար: Առաջ կը բերենք բովանդակութիւնը:
Նախ առում է, որ «Գնութեան միութիւնը» գհաճութեամբ
չետ է դարձնում «Կöln. Zeitung»-ի մեջաբանքը, իր թէ այդ
միութիւնը իր քրիստոնէական սիրոյ գործի մէջ զայնածաւալ կեր-
պով նւիրւել է դաւանափոխական գործերին: Հիլֆսբունդը՝
գործունէութեան մէջ լինդունել է որպէս սկզբունք՝ գործել համա-
ձայնութեամբ այն եկեղեցիների վարչութիւնների հետ, որոնց պատ-
կանում են երեխայքը, և լուսաւորչական եկեղեցու կողմից ևս ոչ

* *Sbuh «Wnukę»* 1899, № 11-12, 1900 *β.* № 1, 2.

մի գանգար չէ լսել նայ «Մեր գործունէութեան շրջանում դաւանափոխութեան մի դէպք անգամ՝ չէ պարահել», և եթէ գերմանական սպասորները քարոզել են երբեմն լուսաւորչական եկիցիներում, այդ պարահել է հայ լուսաւորչական քահանաների հրաւերով: «Այդ անւանումը ենք մենք քրիստոնէական համբերապարութիւն»: Պատրիարք Օրմաննեանի նամակում մեղադրում են Վանի վիլայէթի հաթուղիկ միսսիօնարները, անկարելի բան է, որ բողոքականները դաւանափոխական քարոզութեամբ պարապեն, որովհետեւ բողոքականութեան մկրտունքները արգելում են այդ: Եթէ «Քէօլնիշէ ցայտունգը կամենար, կը կարողանար, բացի այն նամակից, որը հրաւարակել է իւր էջերում՝ սփանալ և պատրիարքի միուրիշ նամակը, գրած կ. Պոլսի մեծ պետութիւնների դեսպաններին»:

Դեսպաններին գրած այս նամակում, պատրիարքը հանդիսաւոր կերպով հերքում է, իբր թէ նա երբ և իյէ գանգարուած լինի Բ. Դրան հայերին օգնող օգարք ընկերութիւնների վրայ: Դերմանական օգնութեան հիմնարկութիւնները հաւանութիւն և պաշտպանութիւն են զինում մինչև անգամ տաճկական գաւառների պաշտօնեանների կողմից: Ինչ վերաբերում է «Կ. Շ. ի խորհրդին, որ «Օդն. միութիւնը» թողնէ հայերին օգնելու գործը և հաւաքած գումարները գործադրէ զերմանացինների օգտին, այսինքն վոլոցը զգէ 1.600 հայ որբիններին — «Օդնութեան միութիւնը» անլինդունակ և ացդպիսի բարբարոսութեան: Այսպեղ Լեպսիուսը բերում է և պառասական չորրորդ ընդհանրական սինոդի (29 նոյեմբերի 1897 թ.) որոշումը հայկական կոտորածների վերաբերամամբ: Վերջապէս «Օդնութեան միութիւնը վնասակար չէ հանդիսանում գերմանական քաղաքականութեանը Արևելքում, ընդհանրականը, նա պատիւ է բերում զերմանական անւան: Հիլֆսբունդը հաւատացած է, որ այդպիսի յարձակումները ազդեցութիւն չեն ունենալու գործը համակրողների վրայ: նոքա կ'կրկնապարփեն իրենց եռանդը օգնութեան այս քրիստոնէական գործում, ի փառս այն Ասպուծոյ, որը անւանում է իրան որբերի և այցիների հայրը, և որը ցանկանում է, որ օգնութիւն հասցնէի բոլոր մարդկանց և որ սոքա համական ճշմարգութեան դիպութեանը»:

Այս քրացապրութիւնը՝ գրւած է շաբ ջերմ և ազնիւ ոգով.
ու գրաւում է ընթերցովի վարահութիւնը:

Այս քրացապրութեան մէջ մի բան մնում է ոչ-պարզ. Աւպ-
ախաւը ընդհանուր խօսքերով ասում է, որ բողոքականների կողմց
անկարելի է, որ դաւանափոխական քարոզութեան մի որ և է Դէպք
պատահած լինի, մինչդեռ Օրմաննեանի նամակի մէջ պարզ ասում
է թէ քրողքական և կամուլիկ միսիոնարները գայթակղեցնում են
հայերին և այլն. Այս փոքր ինչ մութ կէտը պարզում է մի ուրիշ
սպառասխան. յօդւածի միջոցով, որը արւած է մասնաւոր մարդու
կողմից: Այսիւշ յօդւածագիրը, Դոքր. Ռոռբախը (Rohrbach)
ասում է, որ պատրիարքի գրութեան մէջ ոչ մի խօսքով ասւած չէ,
ընէ բողոքական միսիոնարները գերմանացիք են: Այդ ճիշդ է: Խոռ-
քախը հաւաքացնում է, որ այսպեղ խօսքը ամերիկան միսիոնար-
ների մասին է: Եյն ժամանակ ինչպէս պէտք է համարական որ Օր-
մաննեանը պնդում է Դեսպաններին գրած նամակում, թէ նա երբէք
չի գանգառուել ոչ մի օտար օգնող կոմիտէի վրաց Զէ որ ամե-
րիկացիք նոյնպէս ունին իրենց քոյնութեան կոմիտէները, հիմ-
նարկութիւնները: Մնում է ենթադրել, որ հարկաւոր է զանազա-
նել օգնութեան հիմնարկութիւնները և նոցա պարփանող գործիշ-
ները՝ կրօնական միսիոնարներից, որոնց և գուցէ ի նկատի ունի
պատրիարքը իւր գանգարի մէջ: Յամենացն Դէպս կարելի է վերջ-
նականապէս որոշեած և պարզած համարել, որ Օրմաննեանը ինչա-
քի չէ ունեցել գերմանական բողոքականներին, որովհետեւ Հիլֆ-
սբանդի՛ր Ա. Հ.-ի յօդւածի երեւան գալուց յետոց, Դիմեց պատ-
րիարքին հետեւեալ հարցով, զանգարւելի է նա արդեօք Բ. Դրան
առջև գերմանական Հիլֆսբունդի՛ր վրայ թէ ոչ: Իւր պատասխանի
մէջ պատրիարքը ի միջի այլոց ասում է. «Թրպէս զի նորից ապա-
ցուցանեմ իմ զգացմունքներս Դէպի ձեզ, կը ցանկանամ բացարկել,
որ ես երբէք ձեզ մեղադրող չեմ եղել, ոչ էլ թշնամի ձեր որբանոց-
ներին. Նորին գերազանցութիւն գերմանական դեսպանը յաշտնել է
ինձ, որ նա ոչ մի ժամանակ ոչ միաձել է, ոչ ասել է, և ոչ էլ
դրել թէ ես ձեզ վրայ գանգարած և ձեր որբանոցների թշնամի
եղած. լինիմ: Պատրիարքարանի արած գանգարը Բ. Դրան դաւանա-
փուսութեան նկարմամբ չի վերաբերում որբանոցներին, այլ

այնպեղ բացառապէս առած է միայն, որ կրօնափոխութեան պայմանով փողեր են բաժանւած եղել, որ իրօք և կարարւած է Վանի կաթոլիկ միստիոնների կողմից ¹:

Հերաքրքիր է, որ այս վերջին նամակում յիշւած չեն բողոքական միստիոնարները. լինին դոքա գերմանացիք, թէ ամերիկացիք: Օրմանեանի նամակներից, առհասարակ, դժւար է հասկանալ, թէ ով է զբաղւում դաւանափոխական քարոզութեամբ հայերի մէջ, կամ պարապում են դորանով բողոքականները թէ ոչ: Բայց և իսկապէս, անգեղի կլիներ զբաղւել այսպել այդ հարցի պարզաբանութեամբ, որովհետեւ այստեղ մենք զործ ունինք միայն զերմանացիների, կամ աւելի ճիշգն ասած, «Գերման. օգնութեան միութեան» հետ, և հարցը կարող է միայն այսպէս դրւած լինել—անում են արդեօք այդ բանը չիլֆսբունդի ներկայացուցիչները հայերի մէջ թէ ոչ, եթէ մենք ցանկանանք հիմնել Օրմանեանի նամակի վերաց, այն ժամանակ պարասիստնը կարող է միայն բացասական լինել: Այն գեստիկուրից, ինչպէս դնում ենք մենք մեր հարցը, պատրիարքի վերոյիշեալ երեք նամակները և ձեզ վեղիրին, դեսպաններին և «Գերմ. օգնութեան միութեան» հակասական չեն հանդիսանում: Ընդհակառակը, նոքա զանազան կերպ հասրափում են միևնունը, որ չիլֆսբունդը չի զբաղւում կրօնափոխական քարոզով:

Հիլֆսբունդի ֆրանկֆուրտի կենտրոնը իւր կողմից «K. Z.-ի յօդւածի երեան գալուց մի քանի օր յերոյ, մի ընդհանուր ժողով հրաւիրեց, ուր յիշեալ լրադրին այսպիսի մի պարասիստն խմբագրւեց: Կըերենք մի քան: Քաղաքացքներ: «Այն մեղադրանքները, որոնք անուում են վերջին ժամանակները Հիլֆսբունդի գործունէութեան դէմ միայն խրախուսում են մեզ նոր եռանդով շարունակել մեր սիրոյ գործունէութիւնը (unsere Liebesthätigkeit), այն գիտակցութեան հիման վրայ, որ այդպիսի թշնամութիւնը միայն պատիւ է բերում մեր գործին. այնպեղից, ուր անուում են այդ յարձակումները, մենք զնահագութիւն չենք սպասում, որովհետ այնպել ընդունակութիւն չունին հասկանալու, թէ ինչ է

¹ Mittheilungen aus dem Orient. № 8 1899.

կափարիալ ևսազուրկ, քըրիսպոնէական սիրոյ գործունէութիւնը, և այդ պագմառով նսքա կասկածանքով են վերաբերութիւնը, դէպի այն, ինչ որ Են հասկանում... Սկզբունքով մենք հրաժարել ենք հիմնել Փոքր-Ասիայում որ և է բողոքական համայնքներ և այդ միջոցներով (այսինքն փաղով և պաշտպանելու խոսքմունքով) ոչ մի ժամանակ չենք դրդել որ և է լուսաւորչականի թողնել իւր եկեղեցին... Բացի դորանից, ոչ մի անշնորհքութիւն, մենք չենք գտնում պատրոր Յօնիսի գործողութեան մէջ, որը Զէլթունում, մի աւելացանական ժամասպցութեան ժամանակի, գործածելով աւելացանական մի բառ, խօսում էր ևեղքերի ազագութեան մասին, և եթէ այս դէպքից օգտում են մեզ մեղադրելու համար, դա ցոյց է բարիս որքան դժւար է, Տաճկառանի մեր հակառակորդների համար, մեզ մեղադրելու մի դրական պատճառ գտնել: Այդպիսի մեղադրանքները ամենալաւ ապացոյցն են, որ մենք ոչ մի առիթ չենք ուել արդար գանգարելորի... Վերջատէս այն խրառը (որը պալիս է «Կ. Հ.-ը»), այսինքն՝ «գործադրել մեր գումարները աւելի լուրջ և բարեյաջող նպաստաների վրայ», —կարող են բալ միայն նոքա, որոնք ինչպէս քահանան և լեւիոր, անցնում են սպանւածների մօտով, և որոնց համար առեւգրական շահերը աւելի արդարացի են, քան թէ խեղճերի բարեբախտութիւնը: Մենք հաւաքացած ենք, որ մենք աւելի ենք գործում Թիւրքիաի բարեկեցութեան համար, քան թէ նոքա, որոնք այս երկրի վրայ նայում են միայն ինչպէս մի գործունէութեան ասպարէզի վրայ իրենց շահերի համար: Գերմանական Ֆրիֆուունդի' լնդհանուր ժողովը վճռում է, աւելի մեծ եռանդով և սիրով, քան մինչև այժմ, շարունակել սկսած շնորհալի գործը^{1:}:

Այս ժողովում որոշվեց նոյնպէս, արքայացրել Բրոկին Հիլֆ-
սբունդի կարգեալ վասահութիւնը և առաջարկել նրան, որ նա բա-
ցաւրի իրա հետ պատահած դէպքը անմիջապէս գերմանական կայսրին:

Հետաքրքիր է նոյնպէս էլաստ-լուսարինգիայի ճիշդ-կոմիբէի պատրաստանը, որը մենք² դեղի պահասուժեան պարմառով չենք

¹ Mittheilungen uus d. Or. № 7 1899.

⁴ Flugblatt des Elsass—Lothringischen Hilfscomit s f r Arm. 1899. 524.

առաջ բերելու այսորեղ. այսքանը կր նկատենք, որ այս պարասիսանի մէջ ցոյց է դրւում կաթոլիկների վրայ, որոնց խարդախութիւնների շնորհիւ իրր թէ այլ պիսի գանգագներ են առաջ գալիս Հիլֆօրունդի դէմ: Այս ենթադրութեանը հանդիպել ենք լենք և մի ուժից դնել. բայց սա անկասկած սխալէ: թէպէս, իրաւ, որ «K. Z.»-ը հրարարակուում է գերմանական կաթոլիկութեան կիենդրոններից մէկում, Քեօլն քաղաքում, բայց այնուամենայնիւ նրա Հիլֆօրունդի դէմ արած գանգագների վրայ չի կարելի նայել, ինչպէս կաթոլիկական մի արշաւանքի վրայ Հայաստանի բողոքական միսախոնարների դէմ, որովհետիւ, չէ որ պատրիարքի այն նամակում, որը լրագիրը բերում է, Օրմանեանը գանգագուում է և կաթոլիկների դէմ:

Բ. Մասնաւոր պատասխաններ: Մեզ ծանօթ մասնաւոր կողմից եղած հերքումներից և բացագրութիւններից ուշադրութեան արժանի են Reichsbote լրագրինը, պարոն Յելլէրի (Zell-r) և պատասխանը (Rohrbach):

Նախ յայբնելով իւր գարմանքը որ այդպիսի մի թիւրիմացութիւն, ինչպէս պ. Բրոկանի հետ պարահած Դէպքը կարողացել է յարձակումների պագանու ծառայել, «Reichsbote» լրագիրը (№ 89, 1899 թ.) գրում է. «բացարձակապէս սխալ է հաւաքացնելը, թէ աւելարանական օգն. միութիւնը ցանկանում է դաւանափոխութիւն քարոզել: Մենք հասպար գիտենք որ դա ճիշդ չէ. Հիլֆօրունդը ձգուում է միայն զթասիրով գործերով և աւելարանի քարոզումով զարթեցնել հայ լուսաւորչական եկեղեցու մէջ, որը խելդել է արդարին ծէսերի մէջ, աւելի բարոյական-քրիստոնէական ու ոգեկան կեանք (mehr christlich-sittliches und geistiges Leben zu erweeken): Նա չի ցանկանում հայերին անջափել իրենց եկեղեցուց, նոքա պիտի շարունակեն պատկանել այդ եկեղեցուն. բայց պիտի դառնան այդ եկեղեցու կենդանի անդամներա: «Աւելարանական Հիլֆօրունդը (շարունակում է լրագիրը) բոլորի վերաբերմամբ էլ մաքուր խղճմարանք ունի, ինչպէս թուրքի, այնպէս և Գերմանիացի և լուսաւորչական եկեղեցու, որովհետեւ նա չի զբաղւում ոչ կրօնափոխական, ոչ էլ քաղաքական քարոզներով. միթէ ամօթ չէ, որ մի գերմանական լրագիր անցնում է թիւրքերի կողմէ և ասում է գերմանական «Օգն. միութեանը թէ հեռացէք, դուք

խանդարում էք խաղաղութիւնը արևելքում և վնասում էք մեր գոնքեսական շահերին։ Սւետարանական օգնութեան միութիւնը չափազանց բարձր գաղափար ունի քրիստոնէական պարտաւորութեան և գերմանական պարտի մասին, որ կարողանայ հետեւ Հ. Հ. Հ. ի խորհրդին։ Լրագիրը վերջացնում է նկատելով, որ եթէ գերմանացիք օգար և սխալ գեղեկութիւնների հիման վրայ, ինքները հալածեն իրենց սեփական հայրենակիցներին և մանաւանդ այնպիսի պարւելի անձերին, ինչպէս են պասորը Բրոկս, Դր. Լեպսիուս, և Լոմանը, այն ժամանակ, ոչ թէ միայն գերմանական միսիոնարի, այլ և գերմանական վաճառականի և առհասարակ գերմանացուանունը և Դրութիւնը Արևելքում կը կորուի։

Ցելէրի (*Zur Beleuchtung der Angriffe auf deutsche evangelische Hilfswerk in Armenien*)¹ յօդւածից, ոշադրութեան արժանի են հետեւեալ պարզաբանութիւնները։ Անկարելի բան է, որ Հիլֆսբունդը զբար դաւանափոխական քարոզով, որպէս հետեւ նորա հրապարակախօսութիւններից մէկում մինչև անգամ արգայացրում է այն միգքը, թէ այն ժամանակ, երբ հայերը մարտիրոսութեամբ ապացուցին հաւաքարմութիւնը դէպի իրենց եկեղեցին, արդէն ազնւութիւնը արգելում է կրօնափոխական քարոզ կարդալ նոցա մէջ։ Հետեւ Հ. Հ. Հ. ի խորհրդին—փակել որբանոցները և հաւաքուղ գումարները մսիսել գերմանացինների օգորին, անհնարին բան է, որովհետեւ այդ կ'նշանակեր քանդել գերմանական միսիոնի մի գործ (ein deutsches Missionswerk), որին միացած են բիւրաւ, որ մարդիկ և որի ապագան ապահովւած է։ Գերմանիայի աւելուարանական քրիստոնեանների համար Խղճմրանքի գործ է պարահած կողորածններից յետոյ հայերին օգնելը և պախարակելի է, որ մի շարք լրագիրներ թուլ են քալիս իրենց այդպիսի թեթևամբութեամբ վերաբերել խղճմրանքի այդ զդացմունքին։ Ճիշդ է, օղուութեան միութիւնը, սկսելով իւր եղբայրական օգնութիւնը չէր լեկավարում և ի նկատի չունէր Գերմանիայի կառավարութեան շահերը և յարաբերութիւնները Թիւրքիայում, բայց այդ չէ նշանակում, որ Հիլֆսբունդի անդամները աւելի քիչ են հայրենասէր,

¹ Das Reich Christi (ամսաթերթ) Juni 1899.

Քան թէ «Կ. Հ.»-ի շրջանները: «Օգնութեան միութիւնը» ամենևին անփարբեր չէ դէպի Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի յաջողութիւնը և նա ոչ մի ժամանակ չէ ցանկացել խանգարել այդ կէպում իւր կառավարութեանը. ընդհակառակը նա դիմել է մի անգամ այդ կառավարութեան, խնդրելով ցոյց տալ նորան «այն ճանապարհը», որով պիտի նա շարունակէ ընթանալ, ներդաշնակելով իւր քայլերը իշխանութեան ցանկութիւնների հետո:

Բայց ամենահերաքրքիրն է Դր. Ռոռբախի յօդւածը, «Գերմանիան հայերի մէջ» (Deutschland unter den Armeniern) վերագրով, որը կրեան եկաւ անցեալ գարի «Preussische Jahrbücher» նշանաւոր ամսագրի մէջ։ Հեռացես մրգերով հարուստ այս յօդւածը ունի և այն արժէքը, որ նրա հեղինակը, ինչպէս ասացինք վերև, շրջել է անցեալ գարի Մեծ Հայաստանը և Փոքր-Ասիան։ Նկարագրելով հայկական գաւառների ներկայ դրութիւնը և ցոյց տալով ինչ սարսափելի դնութեական և այլ հերեանքներ առաջ բերին հայկական ջարդերը, հեղինակը ասում է, որ ուղակի անգնահարելի է այն ծառացութիւնը, որը եւրսպական և ամերիկեան բարեգործութիւնը արել է Թիւրքիային, որովհետեւթէ այդ գաւառները որ և է բան կարող են գալ հիմա կամ ապագայում գաճկաց պետական գանձարանին, դա շնորհիւ Եւրոպացի և Ամերիկացի օգնութեան կոմիտէների է (էջ 316)։ Առանց այս կոմիտէների շատ գաւառների հայերը բոլորովին պիտի բնաջինը եղած լինէին...։ Ռոռբախի կարծիքով հայկական կորորածները Թիւրքիայի համար գանուլ դաշտ պատերազմի նշանակութիւն ունին. գալով այն հարցին, թէ արդեօք Հիլֆսբունդ'ը դնում է որ և է արգելքներ Գերմանիայի պետական քաղաքականութեանը Տաճակարանում, թէ ոչ, նա ասում է, որ դժւար է երեակացնել մի ուրիշ բան, որը այնպէս նպաստաւոր կերպով աջակցէր Գերմանիայի ներկայ արևելեան քաղաքականութեանը, որ է Թիւրքիան ուժեղացնել և հիմք դնել դնութեական յարաբերութիւնների Գերմանիայի հետ, քանայդ անում են գերման օգնութեան կոմիտէները։ Գերմանական դիպլոմատիային պատիւ չէ բերում այն հանգամանքը, որ նա չի հասկանում օգուել այդ կոմիտէներից, ուղղութիւն դալով և պաշտպանելով նոցա գաճկաց կառավարութեան առաջ (318—320)։

«Կ. Հ.»-ի պուած խորհուրդը Հիլֆսբունդին՝ թողնել օգնութեան գործը, կարող է բլիսել միայն անգիտութիւնից, թէ որքան խոր դժոհութիւն և ոհանութիւն յառաջ կարող է բերել այդ առաջարկութիւնը ժողովրդի մէջ։ Նեղինակը ասում է, որ ինքը փորձառութեամբ գիտէ, որքան առասարակի իր երկրի հսկայական քաղաքականութիւնը բողոքներ է ծագեցնում գերմանական այն շրջանների մէջ, որոնք սովոր են զգալ և մտածել համաձայն կրօնի և բարոյականութեան։ Այս շրջանների մէջ այդպիսի յարձակութիւնը բերում են բոլորովին հակառակ հետեւանքներ և համակրութիւնը դէպի հայերը զօրել անում է։ 350 հազար մարդ պարեկան ծախսել օփարազգի տանշանքները մեղմացնելու գործին, դա կարող է լինել արտայայտութիւն միայն մի խոր քրիստոնէական մարդասիրական համակրութեան (319—320)։ Առաջ բերելով Օրմանների գրութիւնը մեծ վեզիրին, յօդւածագիրը ասում է, որ այդ նամակից երևում է, որ գանգապը ուղղած է Վանի վիլացէթի կաթոլիկական միսիոնարների դէմ։ այդ միսիոնարները Փրանսիացիք են, և ինքը զարմանում է, որ «Կ. Հ.»-ը ացդ նամակով արշաւանք է սկսում Հիլֆսբունդի դէմ։ «Օգնութեան միութիւնը» սկզբունքով խուսափում է որ և է դաւանական քարոզութիւնից, վերջադրէս պատրիարքի նամակի մէջ մի խօսք ևս չէ լիշտած, թէ բողոքական միսիոնարները գերմանացիք են։ Ամբողջ Ասիական Թիւքիայում ասում է Խոռվախը, «հայերի մէջ չըկայում մի գերմանացի բողոքական միսիոնար, և ընդհակառակը այն տեղ գոյութիւն ունին մի շարք ամերիկեան բողոքական միսիոնական կենուրուններ, որոնց շուրջը հաւաքւած և կազմակերպւած բողոքական համայնքների մէջ 30-ից մինչև 40 հազար հայ կայ։ Նեղինակը նկատում է, որ Հիլֆսբունդի վարիչները համաձայնութիւն են կայացրել ինչպէս Օրմաննեանի այնպէս և էջմիածնայ կաթողիկոսի հետ, որ ճընապէս նույնի ոչ մի փորձ չէ անւելու հայ երեխացոց վրայ նոցա խլելու համար շուրջի ոչ մի փորձ չէ անւելու հայ երեխացոց վրայ նոցա խլելու համար իրենց ազգային եկեղեցուց։ և Օրմաննեանը իւր նամակի մէջ ամենաին չէ լիշում Հիլֆսբունդի անունը (էջ 326)։ «Կ. Հ.»-ի յօդւածի ծագման մասին այսպէս է խօսում նաև

«Յա գուշակում եմ, որ այն սրամիպ ոստիկանական կոմմիսարը (որը արգելեց Երոկէսի քարոզը Զէյթունում) հաղորդած է լինելու Կ. Պոլիս, պալապը, թէ Զէյթունում երեան է եկել մի վերին աստիճանի

վրանդաւոր անձնաւորութիւն և թէ պետութեան դրութիւնը գուցէ և ամենասուրբ կեանքը (այսինքն սուլթանի) վրանդի մէջ են, Սորանից յետոյ, երկի, մի սարսափելի նորայով դիմումն է եղած գերմանական դեսպանագրանը, և մի որ և է թղթակից կ. Պոլսում, որը ազնքան է գեսել Զէցթունը, Հայաստանը և որբանոցները, որքան լուսնի միւս կողմը և որի ձեռքն էր ընկել այս հարցի հետ ոչ մի կապ չ'ունեցող պատրիարքի գանգագրը, նստում է և գրում «Կ. Z.-ին այն սքանչելի յօդւածը»:

Վերջին գողերում յօդւածագիրը նկարում է, որ վերին ասպիճանի ցաւալի կը լինէր, թէ Թիւրքիացի հետ ապագաց դնդեսական յարաբերութիւնների գեսակէտից, և թէ Գերմանիացի բարոյական անւան համար, եթէ գերմանական արտաքին գործոց նախարարութիւնը ընդունէ «Կ. Z.-ի գեսակէտը» նա աւելացնում է. «Գերմանական Հիլֆսբունդի գարշութիւնը ոչ մի բան այնքան ուրախութեամբ չէ ողջունելու, որչափ ցանկութիւնը՝ իւր գործունէութիւնը համաձայնելով կառավարութեան հետ, գիտակցաբար ծառայեցնել կայսերական արեւելեան՝ քաղաքականութեան մեծ նպարակներին: Սկսած գործից հրաժարւելու մասին խօսք չէ կարող լինել, և եթէ նորանից վնասներ են ծագում գերմանական հպատակների համար, եթէ մեր արտաքին գործոց նախարարութիւնը անընդունակ է հանդիսանում գերմանական շահերին օգտակար դարձընելու այս նիւթական հարուստ միջացները, իշէալական անձնագոհութիւնը և Հիլֆսբունդի ամբողջ փորձառութիւնը և չի կարողանում պարզել Թիւրքիացի կառավարութեան գործի հութիւնը — այն կէտի վերաբերմամբ կոմիտէները հրաժարւում են որ և՛ պարասիստանագրութիւնից»:

(Հարունակելի)